լեառն: 5 *Եւ ունի զՍէլիոն*[1] *լեառն եւ գետս զՍելագաս եւ զՋոպիաս եւ զհզաւրն Սագառիս, եւ մանունս, որք ի նա անկանին*[2]*. զՄիւնաս լիճ ունի մերձ Նիկոմիդեա[յ] եւ զԱսկանիդէս:* 6 *Ունի կղզիս հինգ*[3] *ի Պոնտոս ծովուն, յորոց երկուքն*[4] *կոչի Կիանիա:* 7 *Ունի եւ լիճ մի այլ՝ Պռամա[յ]:* 8 *Քաղաքս*[5] *ունի, եւ մայրաքաղաքս երկուս*[6]*՝ զՔաղկեդոն*[7] *եւ զ*[17ա]*Նիկոմիդեա*[8]*, որք ունին ընդ ինքեանս քաղաքս չորեքտասան*[9]*, եւ եմպոռիոնս բազումս, այսինքն՝ քաղաքս ծովեզերայս, վաճառատեղիս:* 9 *Լինի առ եզեր [Ռ]ունդակա[յ]*[10] *գետոյ հող սպիտակ՝ «առգեղ» անուն, զոր աղացեալ ցանեն ի վերա[յ] ցորենո[յ]՝ հինգ հարիւր*[11] *կայթն կապիճ մի, եւ պահի ազնիւ, եւ ճ՟ճի չուտէ:*

10 ***Բ.*** *Աշխարհ՝ Մուսիա Մեծ եւ Փոքր, որ կոչի Ելիսպոնտոս*[12]*, առ երի Բիւթանիո[յ]:* 11 *Ունի գետս չորս*[13] *եւ* ***[լերինս երիս եւ կղզիս երկու, եւ ծովեզերեայ]***[14] *մայրաքաղաք"*[15]*՝ զԿիզիկոն, յորում՝ տաճար եւ այլ շինուած՝ մի յեւթն*[16] *հրաշիցն:* 12 *Եւ երեք*[17] *են քաղաքք՝ Իլիոն, Դառդանոն, Տրովադա[յ], զորոց պատերազմէ Դիքտիոն*[18] *պատմէ եւ առասպելքն Հոմերոսի*[19]*:* 13 *Ունի եւ այլ քաղաքս երեսուն եւ ութ*[20]*:*

14 ***Գ.*** *Աշխարհ՝ Առանձնակ Ասիա, յերի կալով Միւսիա[յ] առ ծովով, յորում՝ մայրաքաղաքք*[21] *Եփեսոս, Զմիւռ[ն]իա*[22]*, Պեռգանոս, [զ]Տռալիս*[23]*, որք ունին ընդ ինքեանս քաղաքս քառասուն եւ ութ*[24]*:* 15 *Եւ ունի փոքր աշխարհ զԼիւդիա, յորում մայրաքաղաք՝ Սառդոս, զԵոլիս, զԷոնիա*[25]*, որք են Յոյնք, զԿառիա, եւ գետս եւթն,* ***[կղզիս տասն, լերինս եւթն]***[26]*:* 16 *Ունի կղզի զՔիոս՝ համանուն քաղաքաւ եւ Պոսիդա[ւ]*[27]*, որ լինի անդ մազդիկ խիժ ծառո[յ], եւ զ[Ի]կառոս*[28] [17բ] *եւ զՍամոս՝ համանուն քաղաքաւք, եւ զԿով, զոր Ղուկաս ասէ ի Գործսն*[n]*:* 17 *Եփեսոս հարկատու էր Արտեմեա[յ]. անդ է Յոհաննու*[29] *աւետարանչի գերեզման[ն]*[30]*, եւ միւս Յոհաննու, որ կոչեցաւն Մարկոս, եւ այլք զայլ ոմն Յոհան*[31] *ասեն:*

---

1 *S* զՍելինոն *փխ* զՍէլիոն *(V. Պտղոմէոսի մօտ այս տեղում* Ὀρμίνιον *է)*

2 *VS* անգանին *փխ* անկանին *(վեր.՝ ըստ Ե.58, 307)*

3 *V* ե

4 *V* քն

5 *V* քղ̈ք *[=քաղաքք]*, *S* քաղաք *փխ* Քաղաքս *(վեր.՝ ըստ կանոնաւոր այլոց.* քաղաք *բառը յաճախ գրուած է լոկ* **քղ** *յապաւումով՝ պատույ նշանով կամ այս կրկնաբութերով. Սուքրեանը վերջակէտն այս բառից յետոյ դնելով՝ ստացել է* «Պռամա **քաղաք**» *անհաւանական լճանունը)*

6 *V* բ

7 *V* զԿաղկեդոն *փխ* զՔաղկեդոն *(վեր. Սուքրեանի՝ ըստ նախորդների, տե՛ս նախ. Բ.19, 30)*

8 *S* զՆիկոմիդիա *փխ* զՆիկոմիդեա *(V)*

9 *V* ժդ

10 *V* եզեր Ունդակա, *S* եզերսն Դակայ *փխ* եզեր [Ռ]ունդակա[յ] *(վեր. ըստ նախորդի, տե՛ս. նախ. Ե.4՝* Ռոդանգա[յ] – Ռո[ւ]նդակա[յ]*)*

11 *S* վեց, *V* շ *փխ* հինգ հարիւր *(վեր.)*

12 *S* Ելեսպոնտոս *փխ* Ելիսպոնտոս *(V. հմմտ. Բ.10)*

13 *V* դ

14 *VS չիք* լերինս երիս ... ծովեզերեայ *(1 տող) (վեր. ըստ Երեմեանի, համառօտի՝ նման շարքից)*

15 *V* մայրաքաղաքս *փխ* մայրաքաղաք *(վեր. Սուքրեանի. տե՛ս* մայրաքաղաք[ս] – **զ**Կիզիկոն*)*

16 *V* յէ, *S* յեօթն *փխ* յեւթն *(վեր.՝ ըստ Ա.8, Բ.10, 16)*

17 *V* գ

18 *VS* Տիքտիոն *փխ* Դիքտիոն *(վեր. Երեմեանի. տե՛ս բարբառ.* **Դ** → **Տ**. *հմա՛ Դիքտիոն Կրետացի)*

19 *V* Հոմորոնի, *S* Հոմերոնի *փխ* Հոմերոսի *(վեր., հմմտ. նախ. Դ.11 եւ ուշ երկաթագիր* ***Ս*** → ***Ն****)*

20 *V* լը *(համառօտում՝ գումարով* քառասուն եւ մի*)*

21 *S* մայրաքաղաք *փխ* մայրաքաղաքք *(V. յապաւուած* մայրաքղ̈ք, *ստորեւ՝* քղ̈ս *եւ* մայրաքղք*)*

22 *V* Զմիւռիա *փխ* Զմիւռ[ն]իա *(վեր. Սուքրեանի՝ ըստ նախ. Ե.18-ի, յաջորդն հմա՝* Պեռգամոս*)*

23 *V* զոռաշիս *փխ* զՏռալիս *(վեր. Սուքրեանի՝ ըստ համառօտի՝* «Յօր. *Զորալիս*» *ձնթ-մբ. տե՛ս բոլորագիր* **տ** → **ո** *եւ* **լ** → **շ**. *Պտղոմէոսի՝* Τράλλεις*)*

24 *V* խը

25 *V* զԵլոիս, զԷնոիա *փխ* զԵոլիս, զԷոնիա *(վեր. Սուքրեանի՝* «Յօր. *Զելոիս, Զենոիա*» *ձնթ-մբ)*

26 *V* է, *S* հինգ *փխ* եւթն, [կղզիս տասն, լերինս եւթն] *(վեր.՝ ըստ Երեմեանի՝ համառօտից, որի՝ Պտղոմէոսի թուերի հետ նոյն բնագիրն է.* «Ունի լերինս եւթն (*AE* հինգ, *Pv* եւ), կղզիս տասն, գետս (*Pv* եւ գետս) եւթն (*AE* հինգ)». *տե՛ս* **եւթն ... եւթն***)*

27 *VS* Պոսիդա *փխ* Պոսիդա[ւ] *(վեր., ըստ Երեմեանի՝* «Պոսիդա [քաղաք]». *Պտղոմէոսի՝* Ποσείδιον*)*

28 *VS* զԿառոս *փխ* զ[Ի]կառոս *(վեր. Երեմեանի)*

n Հմմտ. Գործ. ԻԸ 1

29 *S* Յոհաննու *փխ* Յոհանու *(V)*

30 *Ըստ՝ S. V-ի գրիչը յապաւել է լոկ՝* աւետ̈գերզ

31 *S* Յովհան *փխ* Յոհան *(V)*